

**ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի ԿՈՂՄԻՑ  
ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ  
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ**

1. Համաձայն «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի» արժեթղթավորման հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամի/ կառավարիչ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի թիվ Կ/6 որոշման՝ Հիմնադրամը 2016 թվականի սեպտեմբերի 14-ին կատարեց դրամային և դոլարային պարտատոմսերի արժեկտրոնի վճարում և մայր գումարի մասնակի վճարում ներդրողներին:

- **Դրամային պարտատոմսերի արժեկտրոն:** Հիմնադրամը թողարկված ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար հաշվարկել և վճարել է 11,593,834.80 դրամ գումարի չափով արժեկտրոն՝ հիմք ընդունելով մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկված արժեկտրոնը 259.80 դրամ:
- **Դոլարային պարտատոմսերի արժեկտրոն:** Թողարկված մեկ պարտատոմսի դիմաց հաշվարկվել է 1.2512 ԱՄՆ դոլար արժեկտրոն, որը, հիմք ընդունելով ԿԲ կողմից 13.09.2016թ. հրապարակված 474.14 փոխարժեքը, համարժեք է 593.244 դրամին, իսկ մինչև տասնորդական կլորացման արդյունքում՝ 599.20 դրամին: Հիմնադրամը թողարկված ընդհանուր 11,328 հատ դոլարային պարտատոմսերի համար վճարել է 6,719,769.60 դրամ գումարի չափով արժեկտրոն:
- **Դրամային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2016 թվականի հունիսի 14-ից մինչև սեպտեմբերի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 105,236,309.20 դրամ վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/09/2016թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել են 123,020,917.10 դրամ, որը հաշվարկված 14,338,333.80 դրամ արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 111,427,082.30 դրամ: Ստացված գումարը, որի հաշվին պետք է կատարվի պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում ավելին է, քան վճարման ենթակա 105,278,453.10 դրամը, որը ստացվել է 105,236,309.20 դրամին ավելացնելով նախորդ վճարման օրը վճարման ենթակա գումարի չվճարված մասը՝ 42,143.90 դրամը: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և չորրորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնորդական կլորացման ամհրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 105,278,453.10 դրամը ավելացվել է 38,906.90 դրամով, և մնացորդ գումարը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը<sup>1</sup>: **Հիմնադրամը մեկ**

<sup>1</sup> Վճարման ենթակա 105,278,453.10 դրամ գումարը ճշգրտվել է այնպիսի ամենափոքր գումարով, որի պարագայում պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում մեկ պարտատոմսի հաջորդ եռամսյակի համար վճարվելիք արժեկտրոնը կլինի 0.1 դրամի ճշտությամբ:

**պարտատոմսի համար կատարել է 2,360 դրամ, իսկ ընդհանուր 44,626 հատ պարտատոմսերի համար՝ 105,317,360 դրամ մասնակի մարում:** Արդյունքում՝ Հիմանդրամը կատարել է 38,906.90 դրամ գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի ավել մարում, քան հաշվարկվել է (մեկ պարտատոմսի համար՝ 87 լումա): Մատչելի միջոցների հաշվարկը և բաշխումը ներկայացված է Հավելված 1-ում, իսկ Հիմնադրամին փաստացի կատարված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները՝ Հավելված 2-ում:

- **Դոլարային պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում:** 2016 թվականի հունիսի 14-ից մինչև սեպտեմբերի 14-ը կատարվել և Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 186,571.49 ԱՄՆ դոլար վարկի մայր գումարի մարում: Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/09/2016թ. հաշվեգրված ծախսերը նվազեցնելուց հետո մատչելի միջոցները կազմել են 212,338.17 ԱՄՆ դոլար, որը հաշվարկված 14,173.59 դոլար արժեկտրոնի գումարը նվազեցնելուց հետո կազմել է 198,164.58 դոլար: Ստացված գումարը, որի հաշվին պետք է կատարվի պարտատոմսերի մայր գումարի մասնակի մարում ավելին է, քան վճարման ենթակա 186,789.88 դոլար գումարը, որը ստացվել է 186,571.49 դոլարը նվազեցնելով նախորդ վճարման օրը վճարման ենթակա գումարից ավել վճարված մասը՝ 218.39 դոլարը: Ելնելով մեկ պարտատոմսի անվանական արժեքի և չորրորդ եռամսյակում վճարվող մեկ պարտատոմսի արժեկտրոնի՝ մինչև տասնազարեորդական կլորացման ամհրաժեշտությունից, հաշվարկված և վճարման ենթակա 186,789.88 դոլարը նվազեցվել է 104.44 դոլարով, և մնացորդ գումարը ուղղվել է պարտատոմսերի մասնակի մարմանը<sup>2</sup>: **Հիմնադրամը մեկ պարտատոմսի համար կատարել է 16.48 ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր 11,328 հատ պարտատոմսերի համար՝ 186,685.44 ԱՄՆ դոլար մասնակի մարում:** Արդյունքում՝ Հիմանդրամը կատարել է 104.44 ԱՄՆ դոլար գումարի չափով պարտատոմսերի մայր գումարի պակաս մարում, քան հաշվարկվել է (մեկ պարտատոմսի համար՝ 0.01 դոլար):

2. Պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում 6,928 դրամ անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 4,568 դրամ անվանական արժեքով պարտատոմսերով, իսկ 58.88 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերը փոխարկվել են 42.40 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսերով:

3. 2016 թվականի սեպտեմբերի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված 44,626 հատ դրամային պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է **203,851,568.0** դրամ:

---

<sup>2</sup> Վճարման ենթակա 186,789.88 դոլար գումարը ճշգրտվել է այնպիսի ամենափոքր գումարով, որի պարագայում պարտատոմսերի մասնակի մարման արդյունքում մեկ պարտատոմսի հաջորդ եռամսյակի համար վճարվելիք արժեկտրոնը կլինի 0.0001 դոլարի ճշտությամբ:

4. 2016 թվականի սեպտեմբերի 14-ին պարտատոմսի սեփականատերերին վճարումներ կատարելուց հետո թողարկված դոլարային 11,328 հատ պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է **480,307.20 ԱՄՆ դոլար**:
5. Պարտատոմս/Ակտիվ հարաբերակցությունը դրամային և դոլարային պարտատոմսերի համար կազմում է համապատասխանաբար 80.4% և 79.2%: Ընդ որում 2016 թվականի սեպտեմբերի 14-ի դրությամբ դրամային վարկերի քանակը 240 է 253,485,642.40 դրամ մնացորդային արժեքով, իսկ դոլարային վարկերի քանակը 205 է 606,377.75 ԱՄՆ դոլար մնացորդային արժեքով:
6. 2016 թվականի դեկտեմբերի 14-ին Հիմնադրամը կվճարի մեկ դրամային պարտատոմսի համար 171.30 դրամ արժեկտրոն, իսկ մեկ դոլարային պարտատոմսի համար 0.901 ԱՄՆ դոլար արժեկտրոն:

Տիգրան Կարապետյան



Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ՝  
«Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն

15 սեպտեմբերի, 2016թ.

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ  
էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

14.09.2016թ. ժամը 00.00 դրությամբ դրամային և դոլարային պարտատոմսերի վճարման համար Մատչելի միջոցների հաշվարկ

	Դրամային	Դոլարային
<b>Դրամական ներհոսք 14/06/16 - 13/09/16 ժամանակաշրջանի ընթացքում</b>		
Հիմնադրամի կողմից ստացված վարկի մարումներ	105,236,309.20	186,571.49
Հիմնադրամի կողմից ստացված տոկոսագումարներ	17,186,532.90	28,164.11
Հիմնադրամի կողմից ստացված տույժեր, տուգանքներ	1,383,182.90	2,282.21
Հիմնադրամի կողմից ստացված այլ վճարներ	1,086,730.00	-
<b>Ընդամենը ներհոսք</b>	<b>124,892,755.00</b>	<b>217,017.81</b>
<b>Հիմնադրամի կողմից կատարված և մինչև 14/09/2016թ. հաշվեգրված կանոնադրությամբ նախատեսված ծախսեր</b>		
Կառավարման վարձ	723,470.0	1,599.4
Ակտիվների սպասարկման վարձ	571,984.1	1,328.07
Շուկա ստեղծողի վճար	194,818.8	420.3
Պարտատոմսերի սեփականատերերի գործակալի վճար	95,206.8	242.11
Պարտատոմսերի ցուցակման և պահպանման վճար	99,275.0	209.94
Արժեթղթերի պահառության վճար	25,421.1	55.4
ԱՄՆ ՄՁԳ երաշխավորության վճար	161,662.1	723.03
Աուդիտի վճար	-	-
Բանկային հաշիվների սպասարկման ծառայությունների վճար	-	101.46
<b>Ընդամենը կատարված և հաշվեգրված ծախսեր (նվազեցումներ)</b>	<b>1,871,837.9</b>	<b>4,679.64</b>
<b>Մատչելի միջոցներ 14/09/16թ. դրությամբ</b>	<b>123,020,917.1</b>	<b>212,338.17</b>

Մատչելի միջոցների բաշխումը

	Դրամային	Դոլարային
<b>Մատչելի միջոցներ 14/09/16թ. դրությամբ</b>	<b>123,020,917.10</b>	<b>212,338.17</b>
<b>Արժեկտրոնի վճարում բոլոր պարտատոմսի համար</b>	<b>11,593,834.80</b>	<b>14,173.59</b>
Արժեկտրոնի վճարում 1 պարտատոմսի համար	259.80	1.2512
Պարտատոմսերի քանակ	44,626	11,328
<b>Մատչելի միջոցներ արժեկտրոնների վճարումից հետո</b>	<b>111,427,082.30</b>	<b>198,164.58</b>
<b>Հաշվարկված վճարման ենթակա պարտատոմսի մայր գումար</b>	<b>105,278,453.10</b>	<b>186,789.88</b>
Վարկառուների կողմից փաստացի կատարված վարկի մարումներ	105,236,309.20	186,571.49
Նախորդ Վճարման օրը վճ. ենթակա գումարից չվճարված կամ ավել վճարված մասը	42,143.90	218.39
<b>Պարտատոմսի վճարման ենթակա մայր գումար</b>	<b>105,278,453.10</b>	<b>186,789.88</b>
Ճշգրտում կապված մեկ պարտատոմսի անվ. արժեքի կլորացման հետ	<b>38,906.90</b>	<b>-104.44</b>
<b>Պարտատոմսի մայր գումարի վճարում</b>	<b>105,317,360.00</b>	<b>186,685.44</b>
Մայր գումարի վճարում 1 պարտատոմսի համար	2,360.00	16.48
<b>Մնացորդային սպրեդի հաշվի համալրում</b>	<b>6,109,722.30</b>	<b>11,479.14</b>

Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ  
էական փաստերի եվ տեղեկությունների բացահայտման

2016թ հունիսի 14-ից սեպտեմբերի 14-ը փաստացի կատարված և Հիմնադրամին փոխանցված վարկի մայր գումարների մարումների բաշխվածությունը ըստ նախաձեռնող վարկային կազմակերպությունների և դրանց շեղումները կանխատեսվածից

ՈՒՎԿ	Գրաֆիկով սահմանված մարում	Ընդամենը մարում (ներառյալ հետգնված վարկերը*)	Շեղում գրաֆիկից	Ազդագրում կանխատեսված մարում	Շեղում ազդագրում կանխատեսվածից
<b>ԴՐԱՄ</b>					
ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ ՓԲԸ	38,442,766.1	42,261,704.1	9.9%		
Գլոբալ Կրեդիտ ՓԲԸ	7,703,547.5	9,105,162.4	18.2%		
Գառնի Ինվեստ ՓԲԸ	5,785,267.5	7,748,879.5	33.9%		
Նոր Հորիզոն ՍՊԸ	3,157,339.4	4,482,975.7	42.0%		
Կամուրջ ՓԲԸ	18,029,664.5	41,637,587.5	130.9%		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>73,118,585.0</b>	<b>105,236,309</b>	<b>43.9%</b>	<b>87,072,380.4</b>	<b>20.9%</b>
<b>ԴՈԼԱՐ</b>					
Գլոբալ Կրեդիտ ՓԲԸ	22,581.78	43,016.66	90.5%		
Նոր Հորիզոն ՍՊԸ	40,964.47	76,115.13	85.8%		
Կամուրջ ՓԲԸ	38,607.20	67,439.70	74.7%		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>102,153.45</b>	<b>186,571.49</b>	<b>82.6%</b>	<b>151,913.51</b>	<b>22.8%</b>

\* Հիմնադրամը, առաջնորդվելով և հաշվի առնելով իր և Նախաձեռնողների միջև հարաբերությունները կարգավորող պայմանագրային և օրենսդրական մի շարք դրույթներ, որոնք են՝

- «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա Նախաձեռնողի կողմից «Ակտիվների առուվաճառքի և սպասարկման պայմանագրով» տրված երաշխավորություններն ու հավաստիացումները (այդ թվում՝ վարկերի որակի վերաբերյալ), ինչպես նաև նշված պայմանագրով Նախաձեռնողի կողմից ստանձնած՝ համապատասխան վարկերը հետ գնելու պարտավորությունը,
- Հիմնադրամի կողմից թողարկված ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման ազդագրի 58-59-րդ էջերում շարադրված դեֆոլտ վարկերի սպասարկման հետ կապված պայմանները,

- Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով և 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ սպասարկողի և Հիմնադրամի կառավարչի՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերից ելնելով գործելու, իրենց իրավունքները և ներդրողների նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով իրականացնելու և կատարելու ֆիդուցիար պարտականությունը),

ինչպես նաև հաշվի առնելով, որ կան էական խնդիրներ Նախաձեռնողի կողմից վաճառված և սպասարկվող ժամկետանց (դեֆոլտ) վարկերի հետ, որոնք կարող են վտանգել ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերը, «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի և «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հետ կնքել է «Ակտիվների հետգնման պայմանագրեր»:

Համաձայն «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 06.09.16թ. կնքված պայմանագրի՝ հետ են գնվել 25,021.60 ԱՄՆ դոլար ընդհանուր մնացորդով 3 (երեք) ժամկետանց վարկեր, որոնց համար Հիմնադրամին վճարվել է 25,021.60 ԱՄՆ դոլար վարկերի մնացորդ գումարը և 608,748.20 ՀՀ դրամ հաշվարկված տոկոսագումարները և տույժերը:

Համաձայն ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ-ի և Հիմնադրամի միջև 13.09.16թ. կնքված պայմանագրի՝ հետ են գնվել 5,018,277.20 դրամ ընդհանուր մնացորդով 4 (չորս) ժամկետանց վարկեր, որոնց համար Հիմնադրամին վճարվել է 5,018,277.20 դրամ վարկերի մնացորդ գումարը և 1,064,263.20 դրամ հաշվարկված տոկոսագումարները և տույժերը: